ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

*Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEC3-E9C1-4C41-83CA հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։*

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/6101/02/26

# ՈՐՈՇՈՒՄ
# ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՂԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

02.06.2026թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով ըստ հայցի «Թի Էմ Էմ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ նաև՝ Պատասխանող), վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Երրորդ անձ)՝ ՏԿԵՆ-ՀԲՄԱԾՁԲ-2026/1Ս ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 19.05.2026թ. թիվ 4 արձանագրության 3.1 կետով «Թի Էմ Էմ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու), որպես հետևանք գնահատող հանձնաժողովի 19.05.2026թ. թիվ 4 արձանագրության 3.2 կետով «Թի Էմ Էմ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի նկատմամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթները կիրառելու մասին որոշումը և 3.3 կետով՝ «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ին ընթացակարգի 1-ին չափաբաժնի ընտրված մասնակից ճանաչելու որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջների մասին, քաղաքացիական

գործով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը,

**ՊԱՐԶԵՑ**

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Պատասխանողի, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ի՝ ՏԿԵՆ-ՀԲՄԱԾՁԲ-2026/1Ս ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 19.05.2026թ. թիվ 4 արձանագրության 3.1 կետով «Թի Էմ Էմ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու), որպես հետևանք գնահատող հանձնաժողովի 19.05.2026թ. թիվ 4 արձանագրության 3.2 կետով «Թի Էմ Էմ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի նկատմամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթները կիրառելու մասին որոշումը և 3.3 կետով՝ «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ին ընթացակարգի 1-ին չափաբաժնի ընտրված մասնակից ճանաչելու որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջների մասին:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգի միջոցով դատարան ներկայացվել է 30.05.2026 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/6101/02/26 քաղաքացիական գործը, որը **մակագրվել է** Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին **01.06.2026 թվականին, ժամը 21:30 րոպեին,** իսկ հասանելի է դարձել **02.06.2026 թվականին**:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, Դատարանը գտնում է, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-3-րդ մասերի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Սույն մասով նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն գլխի նորմերը տարածվում են էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով դատարանի և դատավարության մասնակիցների, ինչպես նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ անձանց

կողմից իրականացվող գործողությունների վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ սույն գլխի իմաստով՝ Համակարգն օգտագործող անձ է (են) համարվում՝ իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, **գնումների հետ կապված վեճերով վարույթում պատասխանողները**, ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանները, սնանկության գործով կառավարիչները, նոտարները և արտոնագրված հաշտարարները՝ **անկախ Համակարգի միջոցով որևէ անգամ որևէ գործողություն կատարած լինելուց կամ չլինելուց**:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բոլոր դատավարական փաստաթղթերը (հայցադիմում, դիմում, բողոք, պատասխան, դիրքորոշում, միջնորդություն և այլն) կազմվում և **ներկայացվում են Համակարգի միջոցով**՝ Համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին և առաջադրվող պահանջներին համապատասխան, **բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների, որոնք ներկայացվում են միայն նյութական եղանակով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.8-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր ապացույցները ներկայացվում են դրանք սույն օրենսգրքով նախատեսված դատավարական փաստաթղթերին կցելու և **Համակարգով ուղարկելու միջոցով**:

Վերոգրյալի հաշվի առնմամբ Դատարանը գտնում է, որ պատասխանող ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից պետք է պահանջել «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2026/1Ս» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **էլեկտրոնային համակարգի միջոցով** (**բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.1-րդ, 124-րդ, 199-րդ և 200-րդ, 234.6-րդ հոդվածներով, Դատարանը

## ՈՐՈՇԵՑ

1. «Թի Էմ Էմ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ի՝ ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2026/1Ս ծածկագրով հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 19.05.2026թ. թիվ 4 արձանագրության 3.1 կետով «Թի Էմ Էմ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու), որպես հետևանք գնահատող հանձնաժողովի 19.05.2026թ. թիվ 4 արձանագրության 3.2 կետով «Թի Էմ Էմ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի նկատմամբ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթները կիրառելու մասին որոշումը և 3.3 կետով՝ «Քյավառ Սերվիս» ՍՊԸ-ին ընթացակարգի 1-ին չափաբաժնի ընտրված մասնակից ճանաչելու որոշումն

անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից պահանջել դատարան ներկայացնել «ՏԿԵՆ-ՀԲՄԱԾՁԲ-2026/1Ս» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, ընդ որում, ապացույցները պետք է ներկայացվեն **էլեկտրոնային համակարգի միջոցով** (**բացառությամբ** պետական գաղտնիք կազմող տեղեկությունների):

3. Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ **հնգօրյա ժամկետում**:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

**ԴԱՏԱՎՈՐ** Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072 Date: 2026.06.02 11:38:03 **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*